ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/21

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) հիմք ընդունելով «ԱՄԱՐԱՍ-ՅՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից 17.07.2017թ. ներկայացված՝ «Երևանի Թ. Կրպեյանի անվան հ. 62 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «62ԱԴԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին որոշակի գործողություններ կատարելը կամ որոշումներ ընդունելն արգելելու, «62ԱԴԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.07.2017թ. թիվ 2 արձանագրությամբ «ԱՄԱՐԱՍ-ՅՈՒՍ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումները, իսկ պայմանագիր կնքելու որոշման առկայության դեպքում՝ նաև պայմանագիր կնքելու որոշումը չեղյալ համարելուն պարտավորեցնելու, ինչպես նաև «ԱՄԱՐԱՍ-ՅՈՒՍ» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու պահանջների մասին բողոքը և հաշվի առնելով Խորհրդին ուղղված՝ ԳԲԽ-ԱՄ-2017/21 բողոքն առանց քննության թողնելու մասին «ԱՄԱՐԱՍ-ՅՈՒՍ» ՍՊԸ-ի 31.07.2017թ. գրությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 21.04.2017թ. «Հայաստանի

Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1 որոշման 45-րդ կետի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԱՄԱՐԱՍ-ՅՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից 17.07.2017թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**